# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

## <<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով
## տպագրական աշխատանքների
## գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

*ք. Երևան* *22.08.2017թ.*
*ժամը 12:00*

*Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝*

հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աղամյան
հանձնաժողովի անդամներ՝ Ա. Նալբանդյան,
Մ. Բաղդասարյան
հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մանուկյան

*<u>Հայտերի բացման մասին</u>*

**1.**<<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ս. Աղամյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին գնային առաջարկ պարունակող ծրարներ են կազմվել և ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից

| հ/հ | Մասնակցի կազմակերպության անունը (անվանումը) | Գտնվել ու հասցե | Հեռախոսահամար էլ. փոստ |
|---|---|---|---|
| 1. | <<Զանգակ-97>> ՍՊԸ | ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2 | (010) 23 25 28, (099) 90 33 66, info@zangak.am |
| 2. | <<Հայկարլի >> ՍՊԸ | ք. Երևան, Կիլիան 18/6 | (091)20-61-15, haykarli@mail.ru |

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

2. <<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով գնման ընթացակարգի Մասնակիցների կողմից գնային առաջարկները հետևյալն են՝

| Չափա-բաժին-ների համար-ները | Չեռքբերվող Աշխատանքի նկարագիրը | հ/հ | Մասնակցի կազմակերպության անունը (անվանումը) | Գնային առաջարկ ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) |
|---|---|---|---|---|
| 1 | Հ.Թումանյանի քառյակների (փափուկ կազմով) տպագրական աշխատանքներ /300 օրինակ/ | 1. | <<Զանգակ-97>> ՍՊԸ | 260000 |
| | | 2. | <<Հայկարլի >> ՍՊԸ | 360000 |
| 2 | Հ. Թումանյանի քառյակների (կոշտ կազմով) տպագրական աշխատանքներ /200 օրինակ/ | 1. | <<Զանգակ-97>> ՍՊԸ | 284000 |
| | | 2. | <<Հայկարլի >> ՍՊԸ | 290000 |

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

3. <<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով գնման ընթացակարգին <<Զանգակ-97>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում և մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում կային անճշտություններ:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

4. Ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց <<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով գնման ընթացակարգին <<Զանգակ-97>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին ոչ բավարար և հայտը մերժել՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

5.<<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով գնման ընթացակարգին <<Հայկարլի>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում էր հրավերի պահանջներին և որակավորման չափանիշներին, և գնահատող հանձնաժողովը հայտը գնահատեց բավարար:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

6. <<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով գնման ընթացակարգի որպես 1-ին տեղ հաղթող ճանաչվեց <<Հայկարլի >> ՍՊԸ-ն:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

7.Ուստի հանձնաժողովը որոշեց <<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Հայկարլի >> ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր՝ առանց անգործության ժամկետի սահմանման:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

8. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցի հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

9. Հանձնաժողովի որոշմամբ հանձնարարվեց հանձնաժողովի քարտուղարին <<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրության և գրանցամատյանի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

10.Հանձնաժողովի որոշմամբ հանձնարարվեց հանձնաժողովի քարտուղարին պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակել www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

11. <<ՀԹԹ-ԳՀԱՇՁԲ-17/04>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած Մասնակիցներին ծանուցել գնահատող հանձնաժողովի որոշման մասին:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

12. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ք. Երևան, Մոսկովյան 40 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ -3, դեմ -0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ ____________ Ս. Ադամյան

Անդամ՝ ____________ Ա. Նալբանդյան

Անդամ՝ ____________ Մ. Բաղդասարյան

Քարտուղար՝ ____________ Գ. Մանուկյան